Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/3>> ծածկագրով էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.03.2018թ
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Ղուկասյան
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Գ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Հ. Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Սահմանված ժամկետում Կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել: Համաձայն Կարգի 44-րդ կետի՝ կոմիտեից տեղեկատվության չստանալու դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ. Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել՝

Չափաբաժին 1 - <<Բևեռային ուղի>> ՍՊԸ-ին,

Չափաբաժին 2 - <<Անուշ Պետրոսյան>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ ըստ յուրաքանչյուր չափաբաժնի պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Հ. Բաղինյան
Անդամ՝	----------	Տ. Ղուկասյան
	----------	Շ. Իսախանյան
	----------	Ս. Զաքոյան
	----------	Գ. Խաչատրյան
Արձանագրությունը կազմեց Հանձնաժողովի քարտուղար՝	----------	Տ. Վասիլյան